# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 06.04.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/4Հ պայմանագրի

ք. Երևան «23» 06 2017 թ.

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԳՇՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Հովասափյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի N 448-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի և <<ԳՇՆ>> ՍՊԸ-ի միջև 06.04.2017թ. կնքված ծառայությունների մատուցման N ՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/4Հ ծածկագրով պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.3 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1 Ավելացնել Պայմանագրի գինը 370 200 (երեք հարյուր յոթանասուն հազար երկու հարյուր) ՀՀ դրամով:

Պայմանագրի 4.1 կետում նշված <<590 500 (հինգ հարյուր իննսուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ>> բառերը փոխարինել <<960 700 (ինը հարյուր վաթսուն հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ>> բառերով:

1.2 Պայմանագրի վճարման ժամանակացույցը սահմանող թիվ 2 հավելվածը փոխարինել սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը սահմանող թիվ 1 հավելվածով:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2017 թվականի համար նախատեսված շինմոնտաժային աշխատանքների ավարտը:

2.2 Սույն համաձայնագիրը հանդիսանում է 06.04.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/4Հ ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Սույն համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Սույն համաձայնագրի N1 հավելվածը՝ կազմված 1 էջից, համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011012714, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**

<<ԳՇՆ>> ՍՊԸ
ք. Երևան, Կիևյան փող. 16
<<ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ բանկ Հայաստան>> ՓԲԸ
Հ/Հ 217001035542001
ՀՎՀՀ 00005417

Տնօրեն

_____ Վ. Հովասափյան
(ստորագրություն)

*Հավելված 1*
*23.06.2017 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/4Հ*
*ծածկագրով գնման պայմանագրի*
*N 1 համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
**(բաժին *09*, խումբ *06*, դաս *01*, ծրագիր *06*)**

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի մարզադպրոցի /նոր մասնաշենք/ կառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայություն | - | - | 29 500 | 147 600 | 147 600 | 147 600 | 754 100 | 754 100 | 754 100 | 960 700 | 960 700 | 960 700 | 960 700 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011012714, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

_________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**
<<ՀԳՇՆ>> ՍՊԸ
ք. Երևան, Կիևյան փող. 16
<<ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ բանկ Հայաստան>> ՓԲԸ
Հ/Հ 217001035542001
ՀՎՀՀ 00005417

Տնօրեն՝

_________ Վ. Հովասափյան
(ստորագրություն)